# ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# Հարմար դաշնակիցներից՝ ռազմատենչ հարևաններ. պատկերացումների էվոլյուցիան Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում

ԱՐԱՄ ԹԵՐԶՅԱՆ
*Մալմյոյի համալսարան, Շվեդիա*

*Ավանդական մոտեցման համաձայն, արտաքին քաղաքական խոսույթում թշնամու պատկերումն առանցքային նշանակություն ունի պետության արտաքին քաղաքական ինքնության հիմնական առանձնահատկությունների տեսանկյունից: Հոդվածում ուսումնա-սիրվում է 1991-2016 թվականներին Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում թշնամու կերպարի էվոլյուցիան՝ Հայաստանի նախագահների խոսույթի վերլուծության ճանապար-հով: Մասնավորապես, ուսումնասիրվում են Ադրբեջանի և Թուրքիայի վերաբերյալ պատկերացումներում տեղի ունեցած փոփոխությունները՝ ինքնությանն առնչվող և իրավիճակային գործոնների ու խոչընդոտների ուսումնասիրության միջոցով: Հոդվածը զգալիորեն շեղվում է Ադրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի խնդրահարույց հարաբերությունների վերաբերյալ քաղաքական ու տնտեսական մեկնաբանություններից և մեծամասամբ կենտրոնացած է երկրի իրական թշնամիների մասին Հայաստանի նախագահների համոզմունքների վրա: 1991-2016 թվականներին թշնամիների մասին պատկերացումներում տեղի են ունեցել կտրուկ վայրիվերումներ: Ադրբեջանի և Թուրքիայի բնութագիրը «հարմար դաշնակիցներից» և «անփոխարինելի հարևաններից» փոխվել է «ռազմատենչ», «ապակառուցողական», «հայատյաց», «օսմանյան» և «անվստահելի» դերակատարների: Իրավիճակային խոչընդոտներից բացի, փոփոխության հիմնական պատճառներն են նաև Հայաստանի նախագահների համոզմունքների տարբեր համակարգերը, և, որ առավել կարևոր է, Ադրբեջանի և Թուրքիայի աճող թշնամանքը Հայաստանի նկատմամբ:*

**Բանալի բառեր**
Ադրբեջան, Թուրքիա, թշնամի, հայատյացություն, ռազմատենչություն

## Նախաբան

Ադրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի խնդրահարույց հարաբերությունները հանգեցրել են տարածաշրջանային (աշխարհաքաղաքական) մակարդակի քաղաքական ու տնտեսական խոչընդոտների: Հատկանշական է, որ մի շարք ուսումնասիրություններում օգտագործվում են աշխարհաքաղաքական հասկացություններ՝ ռազմատենչությունը և Հայաստանի ու իր հարևանների միջև խոր հակասությունները մեկնաբանելու համար: Ընդհանուր առմամբ, շեշտը դրվում է տարածաշրջանային մակարդակի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական խոչընդոտների վրա, որոնք թելադրում են այնպիսի խոշոր տարածաշրջանային գերտերություններ, ինչպիսիք են Իրանը, Թուրքիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները[1]: Բացի այդ, որոշ ուսումնասիրություններ կենտրոնացած են Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության հայեցակարգային շրջանակների, մասնավորապես՝ «նոր օսմանականություն» գաղափարախոսության և «Ռազմավարական խորություն» դոկտրինի վրա[2]:

Որոշ հեղինակներ զգալի ուշադրություն են դարձնում այն խոչընդոտներին, որոնք պայմանավորված են Հայաստանի «փոքրությամբ»[3], այն է՝ հարևանների հետ հարաբերությունները վերահիմաստավորելու անկարողությամբ: Ընդունված է համարել, որ այլ քաղաքական և տնտեսական խոչընդոտներին զուգահեռ, Թուրքիայի հետ ունեցած պատմական հակասությունները[4], ինչպես նաև հայկական ու ադրբեջանական ազգային ինքնությունների պատմական զարգացումը և Լեռնային Ղարաբաղի տարածքի

---

[1] **Jafalian A.,** ed., Reassessing Security in the South Caucasus: Regional Conflicts and Transformation, Ashgate Publishing, 2011; **De Waal T.,** The Caucasus: An Introduction, Oxford University Press, 2010.

[2] **Torosyan T., Arshakyan G.,** Turkey's Modern Foreign Policy: New Challenges and New Opportunities, *Armenian Journal of Poltical Science*, 2015, **2**, 3, 73-90.

[3] **Kotchikian A.,** The Dialectics of Smallness: State-Making in the South Caucasus, *AIPRG Working Paper* No. 06/13, pp. 1-21.

[4] **Mirzoyan A.,** Armenia, the Regional Powers, and the West: Between History and Geopolitics, Palgrave Macmilan, 2010, pp. 55-106.

նկատմամբ հակասական պահանջները[5] խոչընդոտում են որևէ առաջընթացի:

Միաժամանակ, հարկ է նշել, որ պատշաճ ուշադրության չի արժանացել հիմնական քաղաքական գործիչների առանցքային համոզմունքների և քաղաքականության իրականացման գործում նրանց դերակատարության սոցիալ-կառուցողական տեսանկյունը:

Հոդվածում, մասնավորապես, ուսումնասիրվում են Ադրբեջանի և Թուրքիայի մասին ՀՀ նախագահների համոզմունքները՝ օպերացիոնալ կոդի մոտեցման շրջանակներում: Վերջինս վերաբերում է աքսիոմներին, պոստուլատներին և կանխավարկածներին, որոնք կազմում են ավելի կոնկրետ համոզմունքների և պրակտիկաների հիմքը: Ըստ լայնորեն ընդունված սահմանման, «անհատի համոզմունքների համախումբը ներկայացնում է բոլոր այն կանխավարկածները և տեսությունները, որոնք նա համարում է ճշմարիտ տվյալ պահին»[6]:

Համոզմունքները դասակարգվում են երկու լայն կատեգորիաների՝ համոզմունքներ, որոնք վերաբերում են առաջնորդի փիլիսոփայական համոզմունքներին ամբողջ քաղաքական համակարգի բնույթի մասին և համոզմունքներ, որոնք վերաբերում են առաջնորդի ընտրություններին ու գործիքային մարտավարությանը[7]: Այդ համոզմունքները կենտրոնացած են իրականության ընդհանուր ընկալման (փիլիսոփայական համոզմունքներ) կամ քաղաքական նպատակներին հասնելու համար կիրառվող մեթոդների և մեխանիզմների վրա՝ ընկալվող իրականության սահմանափակումների շրջանակում (գործիքային համոզմունքներ)[8]: Համոզմունքների համակարգը ներառում է նաև *նորմատիվային* համոզմունքներ (համոզմունքներ այն մասին, թե ինչ պետք է լինի) և *դրական* (positive) համոզմունքներ (այն մասին, թե ինչ կա),

---

[5] **Geukjian O.,** Ethnicity, Nationalism and Conflict in the South Caucasus: Nagorno-Karabakh and the Legacy of Soviet Nationalities Policy, Routledge, 2012.

[6] **Houghton D. P.,** Political Psychology: Situations, Individuals, and Cases, Routledge 2009, p. 106.

[7] **Jerold M ed.,** The Psychological Assessment of Political Leaders: With Profiles of Saddam Hussein and Bill Clinton, The University of Michigan Press, 2003.

[8] **Houghton D.,** Ն շ վ . աշ խ, է ջ 106-107:

*կենտրոնական* և *ծայրամասային* համոզմունքներ ( որոնք անբեկանելի են և որոնք կենտրոնական չեն), *բաց* և *փակ* համոզմունքների համակարգեր ( որոնք ենթակա են փոփոխության և որոնք ենթակա չեն փոփոխության)[9]:

Հաշվի առնելով անհատի մտքում համոզմունքների, զգացմունքների և շարժառիթների բարդ համակարգերին հետևելու մարտահրավերները և սահմանափակումները՝ հետազոտությունները հիմնականում կենտրոնացած են համոզմունքների համակարգի բովանդակության և փոխհարաբերությունների ուսումնասիրության վրա՝ դրա հետևանքների միջոցով, որոնք դրսևորվում են լեզվական միջոցներով: Ընդհանուր առմաբ, *բառերը* ներկայացնում են իշխանության իրականացումը՝ սպառնալիքների կամ խոստումների ձևով կամ պետությունների կամ համաշխարհային քաղաքակա-նության այլ գործակալների գործողություններին աջակցության կամ հակազդեցության կոչերի ձևով[10]:

Հոդվածը կենտրոնացած է ՀՀ նախագահների խոսույթի և համատեքստի վերլուծության վրա, որի նպատակն է ներկայացնել նրանց հիմնական համոզմունքները Հայաստանի թշնամիների մասին, օրինակ՝ նախագահների քաղաքական մտածողության մեջ Ադրբեջանի և Թուրքիայի մասին պատկերացումների էվոլյուցիան: Արդյունքում, բացահայտվել են նաև հիմնական իրավիճակային խոչընդոտները, որոնք նախագահների համոզմունքների հետ մեկտեղ, ներկայացնում են թշնամու մասին նրանց ընկալումները:

## Թուրքիայի և Ադրբեջանի պատկերումը Լևոն Տեր-Պետրոսյանի խոսույթում (1991-1998թթ.)

1991թ. Հայաստանի անկախության վերականգնումից ի վեր երկրի արտաքին քաղաքական խոսույթում Թուրքիայի մասին պատկերա-ցումները ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների: Նոր ձևավորված քաղաքական վերնախավը՝ հայտնի որպես Հայոց

[9] Նույն տեղում:
[10] **Schafer M. and Walker G. S. ed.,** Beliefs and Leadership in World Politics, Palgrave Macmilan, 2006, p. 31.

համազգային շարժում (ՀՀՇ), ձեռնամուխ եղավ հայաստանյան քաղաքական մտածողու-թյան մեջ Հայաստանի ավանդական բարեկամների և թշնամիների վերաիմաստավորմանը: Այն սկսեց ձևավորել նոր՝ չեզոք և քաղաքացիական ինքնություն, որը համարվում էր նպաստավոր երկրին սպառնացող մարտահրավերները հաղթահարելու գործում: Այդ քաղաքականության հիմքում ընկած էր հայ-թուրքական հարաբերությունների վերափոխումը: Հաշվի առնելով օսմանյան անցյալը և, մասնավորապես, այն դրոշմը, որը թողել է Ցեղասպանությունը հայերի կոլեկտիվ հիշողության և ինքնության վրա՝ «Թուրքիան» կարծես ներկայացնում է այն ամենը, ինչը հակադրվում է «Հայաստանի» էությանը: Թուրքիայի՝ որպես պատմական թշնամու, ընկալումը հայերի կոլեկտիվ հիշողության մեջ էլ ավելի ամրապնդվեց թուրքական շրջափակումից հետո՝ որպես Ադրբեջանին գոհացնելու քայլ:

Այդուհանդերձ, Հայաստանի քաղաքական վերնախավը հակաթուրքական տրամադրությունները դիտում էր որպես սպառնալիք Հայաստանի և Թուրքիայի մերձեցման համար: Վերջինս համարվում էր պարտադիր գործոն երկրի կայուն զարգացման և տարածաշրջանային կայունության տեսանկյունից: Քաղաքական վերնախավը ջանք չէր խնայում հաղթահարելու հայ հասարակության խոր արմատներ ունեցող զայրույթը Թուրքիայի նկատմամբ: «Մենք մշտապես հիշում ենք պատմական կոնֆլիկտները, սակայն առաջնորդվելով մեր երկրի իրատեսական շահերով, մենք պետք է հաղթահարենք մեր ցավը և հաստատենք բնականոն միջպետական հարաբերություններ… Հոգեբանական արգելքները, թվում է, հաղթահարված են, ինչը մեր շարժման ամենամեծ հաջողություններից է»[11]: Փորձելով մեղմացնել տնտեսական շրջափակմամբ և անցումային շրջանով պայմանավորված ծանր տառապանքը՝ իշխող վերնախավը շարունակաբար ձգտում էր նախապատրաստել հիմքեր հայ-թուրքական մերձեցման համար: 1991-1998թթ. Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած այն

[11] **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի. ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006:

մարտահրավերներին, որոնց դիմակայում էր երկիրը Թուրքիայի կողմից շրջափակման պատճառով, չկար բացահայտ հակաթուրքական հռետորաբանություն: Փորձ էր արվում Թուրքիային պատմական թշնամուց վերափոխել անփոխարինելի հարևանի: Ավելին, Տեր-Պետրոսյանի խոսույթում Թուրքիային վերաբերող հիմնական առանձնահատկությունները սերտորեն կապված էին ոչ թե «թշնամու», այլ «բարեկամի» գաղափարի հետ:

Տեր-Պետրոսյանի վարչակազմը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը չէր ներառել արտաքին քաղաքականության օրակարգում՝ այն դիտարկելով որպես խոչընդոտ հայ-թուրքական հարաբերությունների կարգավոր-ման համար: «Հայաստանը 1915 թվականին տեղի ունեցած իրադարձությունները համարում է հայ ժողովրդի դեմ ցեղասպանություն: Այդուհանդերձ, Հայաստանն այդ հարցը չի համարում որպես նախապայման հայ-թուրքական հարաբե-րությունների կարգավորման համար ... Երկու հասարակությունների միջև փոխըմբռնումը պայմանավորված է երկկողմ հարաբերու-թյունների արագ կարգավորմամբ»[12]: Ըստ Տեր-Պետրոսյանի, հայերի կոլեկտիվ հիշողության մեջ Թուրքիայի՝ որպես ոխերիմ թշնամու, ընկալումն անհրաժեշտ էր հաղթահարել՝ հասարակությանը երկխոսության եւ փոխըմբռնման պատրաստելու համար: Նա նշում էր. «Հայաստանը և Թուրքիան, որպես հարևան պետություններ, պետք է հաստատեն փոխշահավետ տնտեսական կապեր և աստիճանաբար հաղթահարեն պատմական հակամարտությունները, վերականգնեն հայ և թուրք հասարակությունների միջև վստահությունը՝ բարեկամական հարաբերությունների հաստատման ճանապարհով... դա պարտավորեցնում է յուրաքանչյուր կողմին ցուցաբերել քաղաքական կամք և բարոյական մոտեցում»:[13] Հայաստանի առաջին նախագահը հայ-թուրքական հարաբերություններում առաջընթացի բացակայությունը պայմանավորում էր Ադրբեջանի ագրեսիվ դիրքորոշմամբ կարգավորման ցանկացած ձևի նկատմամբ: «Մենք պատրաստակամ ենք անմիջապես հարաբերություններ հաստատել առանց որևէ նախապայմանի… Թուրքիան պաշտոնապես չի

[12] **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 480:
[13] **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 48:

հայտարարում, որ դեմ է դրան, սակայն կածես ընկել է այն ծուղակը, որը հենց ինքն է պատրաստել՝ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը կապելով հայ-ադրբեջանական հարաբերությունների և, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ»[14]: Տեր-Պետրոսյանը խուսափում էր Ադրբեջանի նկատմամբ կոշտ դիրքորոշում դրսևորելուց, քանզի նա համարում էր, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն առանցքային նշանակություն ունի Հայաստանի ազգային շահերի և տարածաշրջանային համագործակցության համար: Տեր-Պետրոսյանը հակամարտությունը մեկնաբանում էր որպես Կրեմլի կազմակերպած դավադրություն երկու ազգերի դեմ, այլ ոչ թե ռասայական, մշակութային և կրոնական բաժանումներից բխող էթնո-քաղաքական անտագոնիզմի դրսևորում. «Հակամարտության հիմքում չկա էթնիկ, ռասայական, ազգային կամ կրոնական գործոն… հակամարտությունն ինքնին արհեստականորեն հրահրել ու պահպանել էր գաղութարար ազգը (Ռուսաստանը): Առանց Կրեմլի միջամտության Հայաստանը և Ադրբեջանը կգտնեին ընդհանուր լեզու… Եթե Ադրբեջանում լիներ ժողովրդավարական կառավարություն, որը բաց կլիներ երկխոսության համար, ցանկացած միջնորդություն կհամարվեր հնացած»[15]: Նախագահ Տեր-Պետրոսյանը հավատարիմ էր «ժողովրդավա-րական խաղաղության» տեսությանը, որի համաձայն ժողովրդավարության խթանումը կարևոր է «սառեցված» հակամարտության արդյունքում ստեղծված փակուղուց դուրս գալու համար: «Ես համոզված եմ, որ երբ մենք ունենանք Ղարաբաղի հակամարտության արդարացի կարգավորում, մեր հասարակություններն արագորեն կգտնեն այն մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են խաղաղ համագոյակցության ավանդույթները պահպանելու համար»[16]:

Չնայած հայ-ադրբեջանական հակամարտությանը, Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթը զերծ էր Ադրբեջանի նկատմամբ արհամարհանք և ատելություն քարոզող հռետորաբանությունից: Տեր-Պետրոսյանը հստակ տարբերակում էր ադրբեջանական պետությունն

[14] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 595:
[15] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 197:
[16] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 196:

ու հասարակությունը՝ համարելով, որ հայ-ադրբեջանական դիմակայության կարգավորման հիմնական խոչընդոտը Ադրբեջանում ժողովրդավարության բացակայությունն է և բանակցային գործընթացին հավատարիմ մնալու դժկամությունը: Այդուհանդերձ, Տեր-Պետրոսյանի խոսույթն Ադրբեջանի մասին ավելի շատ բացասական է, քան դրական: «Բարեկամ» և «թշնամի» հասկացությունների միջև սահմանը լղոզված է: Տեր-Պետրոսյանը քննադատում էր Բաքվի քաղաքականությունը, որն, ըստ նրա, օգտագործում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը տնտեսական, քաղաքական և սոցիալական ներքին խնդիրներից ուշադրությունը շեղելու համար[17]:

Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ադրբեջանը բնութագրվում էր հետևյալ կերպ՝ «ապակառուցողական», «ռազմատենչ», «ոչ ժողովրդավարական», «հարմար դաշնակից», «հարևան գործընկեր» և այլն: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը դիտարկվում էր որպես «հարմար դաշնակիցների»՝ Ադրբեջանի և Թուրքիայի, հետ մերձեցման գլխավոր խոչընդոտ: Իշխող վերնախավն ընդգծում էր հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների հնարավոր տնտեսական նշանակությունը՝ պնդելով, որ պատմական հակամար-տությունը և ինքնության հետ կապված խոչընդոտները պետք է ստորադասվեն տնտեսական շահերին: Ըստ Տեր-Պետրոսյանի, «Ղարաբաղի թշնամին ավելի շատ միջազգային համայնքն է, քան Ադրբեջանը»[18]:

Այդուհանդերձ, հայաստանյան ռազմավարական մտածողության մեջ Ադրբեջանի և Թուրքիայի վերահմաստավորման նրա ջանքերն ապարդյուն էին: Տեր-Պետրոսյանի «թուրքամետ» և «ադրբեջանամետ» տեսակետները, հատկապես՝ շրջափակման վերացման դիմաց ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում զիջումների շեշտադրումը հակասում էր հանրության շրջանում տարածված տեսակետին: Արդյունքում, 1998թ. Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց:

---

[17] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 194:
[18] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 630:

**Թշնամիների մասին պատկերացումները Ռոբերտ Քոչարյանի խոսույթում (1998-2008թթ.)**

Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք Հայաստանի կառավարության դիրքորոշումը Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ զգալիորեն կոշտացավ: Նա վճռականորեն պնդում էր. «Մեր մոտեցման վերաիմաստավորումից 10 տարի անց այժմ ես կարծում եմ, որ դա քաղաքականապես սխալ էր (զիջումներ անելը): Դա որևէ արդյունք չտվեց: Թուրքիայի նկատմամբ 1998-2000 թվականներին կոշտացած դիրքորոշումը տրամաբանական է, քանզի մենք ոչինչ չստացանք մեր զիջումների դիմաց…»[19]: Քոչարյանն իր ելույթներում խստորեն դատապարտում է Թուրքիային՝ Հայաստանն անօրինական շրջափակման ենթարկելու համար, ինչը խոչընդոտում է երկրի առաջխաղացմանը եվրոպական ինտեգրման ուղղությամբ և կայուն զարգացմանը: Այդուհանդերձ, չնայած պատմական հակամարտությանը և թուրքական շրջափակմանը, Թուրքիան համարվում է կարևոր հարևան, որը կարող է առանցքային դերակատարություն ունենալ տարածաշրջա-նային կայունության գործում, եթե փոխի իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: «Պատմությունը և աշխարհագրությունը մեզ մոտեցրել են, մենք հարևաններ ենք… մեր երկու երկրների միջև որոշ հեռավորությունը կարող էր թույլ տալ հեռավորություն սահմանել մեր անցյալի ու ապագայի միջև: Սակայն մենք չենք կարող մեզ նման շռայլություն թույլ տալ: Մեր միջև չկա տարածություն»[20]: Ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում է. «Բնականոն հարաբերությունների բացակայությունը բացասաբար է ազդում տարածաշրջանային կայունության վրա… Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կնվազեցնի տարածաշրջանում նոր բաժանարար գծերի առաջացման հնարավորությունը և կօգնի ստեղծել ավելի նպաստավոր միջավայր

[19] Armenian leader tells Turkey not to meddle in Karabakh, January 2003, http://reliefweb.int/report/armenia/armenian-leader-tellsturkey-not-meddle-karabak (11.09.2016).

[20] ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի ելույթը, հունիսի 26, 2002, http://www.mfa.am/en/speeches/item/2002/06/26/turk/ (09.03.2017):

Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական կարգավորման համար»[21]:

Քոչարյանի նախագահության ընթացքում Երևանը բազմիցս հայտնել է իր պատրաստակամությունը շրջանցելու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ հայ-թուրքական հարաբերու-թյուններում ստեղծված փակուղուց ազատվելու համար: Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության համաձայն, Հայաստանը երկար ժամանակ պաշտպանել է առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատման գաղափարն ու կշարունակի ջանքեր գործադրել խոչընդոտների հաղթահար-ման և Հայաստանի ու Թուրքիայի միջև երկկողմ հարաբերությունների բարելավման համար[22]: Հարաբերությունների բարելավման ուղղութ-յամբ շոշափելի առաջընթացի բացակայությունը վերագրվում էր Անկարայի ագրեսիվ քաղաքականությանը: Այն հարցին, թե որոնք են երկկողմ հարաբերությունների կարգավորման հիմնական խոչընդոտ-ները, արտգործնախարար Օսկանյանը մատնանշել է Թուրքիայի դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության հարցում. «Հայաս-տանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերու-թյունների հաստատումը կամ սահմանի ամբողջական վերաբացումը՝ նախքան հակամարտության վերջնական կարգավորումը, հավանա-կան չէ… Ղարաբաղյան հիմնախնդիրը դարձել է հարաբերությունների բարելավման նախապայման»[23]: Քոչարյանի օրոք արտաքին քաղաքական խոսույթում Թուրքիայի հիմնական բնութագիրը կապված էր «կարևոր հարևան» և «պատմական թշնամի» հակառակ հասկացությունների հետ: Թուրքիան բնորոշվում էր «ոչ եվրոպական քաղաքականությամբ» և «ռազմատենչ հռետորաբանությամբ» առաջ-նորդվող երկիր: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, Հայաստանի արտաքին քաղաքական գործիչները սկսեցին դրական նոտայով՝

[21] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrineeng.pdf (07.08.2015):

[22] Նույն տեղում:

[23] Արտգործնախարար Վարդան Օսկանյանի տված բացառիկ հարցազրույցը Մեդիամաքս գործակալությանը, հոկտեմբերի 18, 2002, http://www.mfa.am/en/speeches/item/2002/10/18/mediamax (26.02.2016):

շեշտադրելով խաղաղ բանակցությունների կարևորությունը: Քոչարյանն ի սկզբանե ձեռնպահ մնաց Ադրբեջանի նկատմամբ կոպիտ դիրքորոշումից՝ վերջինիս կոչ անելով հրաժարվել իր հավակնություններից և վերսկսել Լեռնային Ղարաբաղի հակամարտության համապարփակ կարգավորման շուրջ բանակցությունները՝ առանց որևէ նախապայմանի[24]: Նա համարում էր, որ հակամարտության կարգավորման առաջընթացին կարելի է հասնել միայն ինտենսիվ և համառ ջանքերի շնորհիվ՝ խոր արմատներ ունեցող թշնամանքից ազատվելու համար: Ինչպես իր իրավանախորդը, Քոչարյանը բազմիցս ընդգծել է, որ չնայած Ադրբեջանի ջանքերին՝ հակամարտությունը ներկայացնել կրոնական և մշակութային տարրերով, մահմեդական աշխարհի աջակցությունը ստանալու համար, դրա հիմքում չկա կրոնական կամ մշակութային որևէ պատճառ[25]: Այդուհանդերձ, ժամանակի ընթացքում նա սկսեց արձագանքել Ադրբեջանի քարոզչությանը և Հայաստանի դեմ պատերազմ վերսկսելու սպառնալիքներին: Պաշտոնական Երևանի արտաքին քաղաքական խոսույթի նոր ուղղության համաձայն Ադրբեջանը որակվում էր որպես «ագրեսոր», այն եզրույթով, որով շարունակաբար պաշտոնական Բաքուն բնորոշում էր Հայաստանը:

«1992-1994 թվականների պատերազմը ծագել էր ադրբեջանական իշխանությունների սանձազերծած ագրեսիայի արդյունքում՝ նպատակ ունենալով գրավել Լեռնային Ղարաբաղի տարածքը էթնիկ զտումների միջոցով... հակամարտության կարգավորումը պետք է հիմնվի դրա էության, այլ ոչ նավթային դոլարներից բխող Ադրբեջանի հարստացման վրա: Դա առճակատման, այլ ոչ փոխզիջման բաղադրատոմս է»[26]: Առաջնորդվելով հակամարտությունների կարգավորման եվրոպական չափանիշներով՝ Հայաստանի արտաքին քաղաքական գործիչները համարում էին, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ինտենսիվ փոխգործակ-ցությունը կարող է օգնել դուրս գալ փակուղուց.

---

[24] **Քոչարյան Ռ.,** Ելույթներ և հարցազրույցներ, Երևան, 2011, էջ 19:
[25] **Քոչարյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 141:
[26] **Քոչարյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 247:

«ԵՄ-ի ձևավորման պատմությունը ցույց է տալիս տարածաշրջանային համագործակցության առավելությունները՝ որպես բարգավաճման և կայունության ուղի ... Տարածաշրջանային համագործակցության բացակայությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնական խոչընդոտներից է: Հայաստանը հավատում է տարածաշրջանային համագործակցության միջոցով հակամարտության կարգավորման հնարավորությանը, մինչդեռ Ադրբեջանը բացառում է դրա հնարավորությունը, քանի դեռ հակամարտությունը չի կարգավորվել»[27]:

Քոչարյանը կասկածի տակ էր առնում հայերի և ադրբեջանցիների էթնիկ համատեղելիությունը. «Հակահայ-կական ջարդերը (1988թ. Սումգայիթում և 1990թ. Բաքվում) ցույց տվեցին, որ հայերն ու ադրբեջանցիները էթնիկ առումով անհամատեղելի են: Ցեղասպանություն վերապրած ժողովուրդը չի կարող թույլ տալ դրա կրկնություն»[28]:

Կրտսեր Ալիևի նախագահության շրջանում հարաբերություններն ավելի սրվեցին: Գագաթնակետը եղավ 2004թ. փետրվարի 19-ին, երբ ադրբեջանական բանակի լեյտենանտ Ռամիլ Սաֆարովը սպանեց քնած 26-ամյա հայազգի լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին՝ Բուդապեշտում անցկացվող ՆԱՏՕ-ի հատուկ ուսումնական ծրագրի ժամանակ: Սաֆարովը հերոսացվեց Ադրբեջանում՝ վայելելով Ալիևի բացահայտ աջակցությունը[29]: Այդ միջադեպին հաջորդող իր հայտարարություններում Քոչարյանն ընդգծում էր, որ Ադրբեջանի թշնամանքը լավատեսության շատ քիչ տեղ է թողել հակամարտության խաղաղ կարգավորման հնարավորության վերաբերյալ: Սպանությունն էլ ավելի խորացրեց հակամարտությունը և համախմբեց հակաադրբեջանական տրամադրությունները ողջ հայ հասարակության շրջանում: «Ուրիշներ» կերպարը դարձավ ավելի ընդգծված: Նախագահ

[27] **Քոչարյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 255:
[28] Armenian leader…
[29] Azerbajani Kills Armenian at Peace Program, February 19.2004, http://www.washingtonpost.com/wpdyn/ articles/A54979-2004Feb19.html (22.09.2016).

Քոչարյանը նշում էր. «Հայ հասարակությունը երբեք չէր փառաբանի մարդասպանին, ով կացնահարել է քնած մարդու: Ես համոզված եմ, որ նման հոգեբանական իրավիճակում հասարակությունը չի կարող հաջողություն հասնել…»[30]: Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում էր հակամարտության տրանսֆորմացիայի անհրաժեշտության մասին՝ ադրբեջանական քաղաքականությունը բնորոշելով որպես խոչընդոտ հակամարտության կարգավորման և տարածաշրջանային համագործակցության ճանապարհին.

> «Ադրբեջանը որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է Հայաստանի մեկուսացմանը տարածաշրջանային համագործակցության բոլոր նախագծերից: Ադրբեջանը շարունակաբար հրաժարվում է բացել Հայաստանի հետ հաղորդակցության ուղիները և մերժում է Հայաստանի ու միջազգային հանրության նախաձեռնությունները երկկողմ համագործակցության մեջ ներգրավվելու ուղղությամբ՝ Ղարաբաղյան հակամարտության հարցում Հայաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով: Հայաստանը հավատում է, որ երկկողմ և տարածաշրջանային համագործակցությունը կարող է ստեղծել վստահության մթնոլորտ և լուրջ դրական ազդեցություն ունենալ ընդհանուր իրավիճակի վրա: Հայաստանը կշարունակի ջանքեր գործադրել այդ ուղղությամբ և այդ նպատակով կխրախուսի համագործակցությունը, շփումները և այցերը ցանկացած մակարդակում»[31]:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ, ի տարբերություն իր իրավանախորդի, Քոչարյանն ուներ ավելի կոշտ դիրքորոշում Թուրքիայի նկատմամբ՝ պարբերաբար ընդգծելով, որ Հայաստանը չի պատրաստվում արհամարհել անցյալը: Այդուհանդերձ, Քոչարյանը ձեռնպահ է մնացել երկկողմ հարաբերությունների հաստատման

---

[30] **Քոչարյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 297:

[31] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն…

նախապայմանների առաջադրումից, ինչը կարևոր էր համարում Հայաստանի եվրաինտեգրման համար:

Քոչարյանի նախագահության օրոք Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ Ադրբեջանը և Թուրքիան հիմնականում բնութագրվում են հետևյալ հասկացություններով՝ «ռազմատենչ», «ապակառուցողական», «էթնիկ առումով անհամատեղելի» և «ագրեսիվ»[32]:

## Թուրքիայի մասին պատկերացումները Սերժ Սարգսյանի խոսույթում (2008-2016թթ.)

Սերժ Սարգսյանի նախագահության սկիզբը համընկավ Հարավային Կովկասում լայնամասշտաբ աշխարհաքաղաքական զարգացումների, այդ թվում՝ 2008թ. օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի միջև հնգօրյա պատերազմի հետ: Այդ սառեցված հակամարտությունների ապասառեցումը մտավախություն առաջացրեց Հայաստանում, որ այն կարող է արձագանք ունենալ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում: Հնարավոր ռիսկերը նվազեցնելու համար Սարգսյանը պատրաստակամություն հայտնեց հաղթահարել խոր արմատներ ունեցող թշնամանքը և միջոցներ սահմանել Ադրբեջանի ու Թուրքիայի հետ խաղաղ համագոյակցության ապահովման համար: Սարգսյանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանի ընդհանուր և արտաքին քաղաքական ինքնությունների վերաիմաստավորմանը, ինչը համարում է կարևոր գործընթաց տարածաշրջանային համագործակցության առաջընթացի համար. «Մենք պետք է ձևավորենք և ձևակերպենք հայկական նոր ինքնություն:

[32] **Terzyan A., Galstyan N.,** The Portrayal of "The Other" in Foreign Policy Discourse and Public Consciousness in Armenia (2008–present)', *Caucasus Analytical Digest*, Centre for Security Studies (CSS), September 2015, **77**, pp. 2-6.

Ինքնություն, որը պետք է դառնա հայի փարոսը նոր դարում»[33]: Հայտարարության մեջ անուղղակիորեն ընդգծվում էր հայ-թուրքական հակամարտության լուծման և երկու երկրների միջև տևական ժամանակ փակուղի մտած հարաբերությունների էջը շրջելու անհրաժեշտության մասին: Թուրքիայի «զրո խնդիրներ հարևանների հետ» և «ռիթմիկ դիվանագիտություն» գաղափարները ցույց են տալիս Անկարայի նոր դիրքորոշումը, մասնավորապես՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման առնչությամբ, ինչը նախկինում ընկալվում էր որպես «կարմիր գիծ»: Դրա համար խթան հանդիսացավ նաև «Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմ» ստեղծելու Անկարայի 2008թ. առաջարկությունը: Նոր զարգացումներն արտահայտվեցին նաև Սարգսյանի արտաքին քաղաքական խոսույթում, որում ընդգծվում էին միավորված Կովկասի և հայ-թուրքական մերձեցման գաղափարները: Սարգսյանը նշում էր. «Ես կարծում եմ, որ օգոստոսյան իրադարձությունները բոլորի համար ակնհայտ դարձրեցին Կովկասում իրավիճակի լարվածության իրական մակարդակը և այստեղ առկա մարտահրավերների ու վտանգների լրջությունը»[34] : Նա մեծապես կարևորում էր տարածաշրջանային համագործակցությունը՝ որպես նոր մարտահրավերների լուծման միջոց: Հայ-թուրքական մերձեցման խնդիրը դրված էր վերանայված տարածաշրջանային քաղաքականության հիմքում: «Ես իսկապես հավատում եմ, որ եկել է ժամանակը լուծելու հայ-թուրքական հարաբերություններում առկա խնդիրները»[35]: Այդ տեսլականները կյանքի կոչելու համար Սարգսյանը Թուրքիայի նախագահին

---

[33] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը, սեպտեմբերի 24, 2008, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24/news-18/ (04.02.2016):

[34] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Մյունխենի անվտանգության քաղաքականության հարցերով համաժողովում, փետրվարի 7, 2009, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2009/02/07/news-30/ (17.04.2016):

[35] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում …

հրավիրեց Հայաստան՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի միջև ֆուտբոլի աշխարհի գավաթի որակավորման խաղերը: Աբդուլա Գյուլի պատմական այցը Երևան և Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու Սարգսյանի հանձնառությունը զգալիորեն սասանեցին ստատուս քվոն: Բոլոր հետագա զարգացումներն ու հայտարարություններն աջակցում էին դիվանագիտական հարաբերությունների հաստատման գաղափարը: Հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզի» աշխատանքներն ավարտվեցին 2009թ. ապրիլին և հոկտեմբերի 10-ին երկու երկրների արտգործնախարարները ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրություն» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբե-րությունների զարգացման մասին արձանագրություն»: Արձանագրությունների վավերացումը թվում էր ժամանակի հարց է՝ հաշվի առնելով փակուղուց դուրս գալու կողմերի ուժեղ հռետորաբանությունը: Սակայն իրականությունը դասավորվեց այլ կերպ: Արձանագրությունները ստորա-գրելուց կարճ ժամանակ անց Թուրքիան հետ կանգնեց առանց նախապայմանների Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման իր պարտավորությունից[36]:

Հաշտեցման քաղաքականությունը վերհանեց երկկողմ հարաբերությունների հաստատման ճանապարհին ինքնության հետ կապված մի շարք խոչընդոտներ: Ի սկզբանե հայ-թուրքական մերձեցման փորձը Հայաստանում քաղաքական և հասարակական բուռն քննարկումների առիթ դարձավ: «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը դուրս եկավ իշխող կոալիցիայից՝ ի նշան բողոքի ընդդեմ բանակցությունների: Կուսակցությունը կոշտ քննադատում էր Սարգսյանի հաշտեցման քաղաքականությունը, մասնավորապես՝ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ճանապարհային քարտեզը, որը չէր փոխհատուցում Հայաստանի

[36] **Terzyan A.,** The Evolution of Armenia's Foreign Policy Identity: The Conception of Identity Driven Paths. Friends and Foes in Armenian Foreign Policy Discourse, *Values and Identity As Sources of Foreign Policy in Armenia and Georgia*, ed. Kornely Kakachia and Alexander Markarov, 'UNIVERSAL', pp. 170-171.

զիջումներին: Դաշնակցությունը խոր մտահոգություն հայտնեց Անկարայի՝ Հայաստանին առաջադրած նախապայմանների մասին՝ նշելով, որ Թուրքիան չի վերացրել տնտեսական շրջափակումը[37]: Սփյուռքահայերը՝ Հայոց ցեղասպանություն վերապրածների ժառանգները, Սարգսյանի հաշտեցման քաղաքականությունը բնորոշում էին որպես «դավաճանություն»: Համատարած մտահոգությունը փարատելու և գործընթացը հստակեցնելու համար նախագահը համահայկական շրջագայություն կազմակերպեց դեպի խոշոր հայ համայնքներ: Նա բազմիցս ընդգծել է, որ գործընթացը չի վտանգի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և կախված չի լինի անընդունելի զիջումների ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումից[38]: Չնայած փակուղուց դուրս գալու ինտենսիվ ջանքերին, ժամանակի ընթացքում առաջացան այլ խոչընդոտներ: Մասնավորապես, Թուրքիան ապացուցեց, որ չի կարող դիմակայել հայ-թուրքական հաշտեցմանն ուղղված Ադրբեջանի ընդդիմադիր դիրքորոշմանը: Ավելի ուշ Սարգսյանը կասեցրեց արձանագրությունների վավերացման գործընթացը[39]: Ձախողված գործընթացից հետո Սարգսյանը խստացրեց իր դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ. ««Զրո խնդիրների» քաղաքականությունը հարևանների հետ զրոյական արդյունք է տվել: Դրա պատճառն այն է, որ Թուրքիան փորձում է հարևանների հետ բոլոր խնդիրները լուծել այդ հարևանների հաշվին»[40]: Ձախողումը խորքային հետևանքներ ունեցավ հայ հասարակության շրջանում՝ ամրապնդելով այն մտավախությունները, որ Թուրքիայի կայսերական բնույթն անփոփոխ

---

[37] Dashnaks Quit Armenia's Ruling Coalition, April 27, 2009, http://www.azatutyun.am/content/article/1616799.html (14.03.2016):

[38] Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը իրանահայ համայնքի հետ հանդիպման ժամանակ, ապրիլի 14, 2009, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2009/04/14/news-34/ (21.03.2016):

[39] **Terzyan A**…, նշվ. աշխ., էջ 172:

[40] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած ընդլայնված նիստում, հունվարի 15, 2013, http://www.president.am/en/statements-andmessages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministryof-Defense/ (18.06.2017).

է: Սարգսյանն իր խոսույթում հստակ արտահայտեց այդ գաղափարը՝ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը որակելով որպես «նոր օսմանականության» վառ դրսևորում. «Ի՞նչ է Օսմանյան կայսրությունը տվել իր լծի տակ գտնվող ժողովուրդներին՝ կոտորածներից, բռնակալությունից, կեղեքումներից բացի: Ո՞վ է հասցրել կարոտել օսմանականությանը, որ որոշ մարդիկ փորձում են ծնել «նոր օսմանականություն»»[41]: Արտգործնախարար Նալբանդյանը ևս կասկածի տակ էր առնում Թուրքիայի հավատարմությունը «զրո խնդիրներ հարևանների հետ» սկզբունքին՝ ընդգծելով հռետորաբանության և քաղաքականության միջև անհամապատասխանությունը. «Թուրքիան ձևացնում է, որ բոլոր տարածաշրջանային խնդիրները պետք է ունենան վերջնական «համապարփակ լուծում»: Սա գեղեցիկ արտահայտություն է, սակայն որքանո՞վ է իրատեսական: Դա սոսկ հռետորաբանություն է, միայն բառեր և ոչ մի գործնական քայլ… Թվում է, թե մենք խոսումն ենք տարբեր լեզուներով: Մի կողմից թուրք առաջնորդները ձևացնում են, որ իրենք հարգում են պայմանագրերին հավատարիմ մնալու (*pacta sunt servanda*) սկզբունքը, սակայն, մյուս կողմից նրանք ձեռնպահ են մնում Ցյուրիխում իրենց իսկ ստորագրած համաձայնագրերը վավերացնելուց և կյանքի կոչելուց»[42]: Արձանագրությունների տապալումն ի չիք դարձրեց Թուրքիայի հանդեպ վստահությունը և էլ ավելի կարծրացրեց Թուրքիայի ընկալումը՝ որպես անհուսալի և անկանխատեսելի հարևան, որը վարում է հակահայկական քաղաքականություն: «Կորչի՛ վավերացումը»[43]: Այս կոշտ արտահայտությունը, որն արեց Սարգսյանը 2014թ.

---

[41] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Կիպրոսի Հանրապետության ներկայացուցիչների պալատում, հունվարի 17, 2011, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/01/17/news-84/ (20.06.2017).

[42] Edward Nalbandian, Turkey Has Gone Back on its Word: Armenia's foreign minister says Ankara needs to prove its good intentions, http://www.wsj.com/articles/SB10001424052748703794104575554566316762205 0 (14.04.2017).

[43] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում, սեպտեմբերի 24, 2014, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-UN-New-York-speech/.

սեպտեմբերի 24-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում վկայում է այն դժվարությունների մասին, որոնց արդյունքում նրա դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ կոշտացել է իր պաշտոնավարման ընթացքում: 2015թ. փետրվարի 16-ին նախագահը պաշտոնական նամակով դիմեց Ազգային ժողովին՝ տեղեկացնելով Հայաստան-Թուրքիա արձանագրությունները ՀՀ ԱԺ-ից հետ կանչելու վերաբերյալ իր որոշման մասին[44]: Ըստ էության Հայաստանի արտաքին քաղաքականության ինքնությունը վերահիմաստավորելու և այն հայ-թուրքական մերձեցմանը համապատասխանեցնելու Սերժ Սարգսյանի նախնական փորձերը ապարդյուն էին: Հետագայում Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Թուրքիան սկսեց բնորոշվել «օսմանյան», «ապակառուցողական», «ռազմատենչ» և «անվստահելի» հասկացություններով:

## Բացառիկ լավատեսությունից՝ խոր հիասթափություն. Ադրբեջանի մասին պատկերացումների էվոլյուցիան Սերժ Սարգսյանի խոսույթում

Նախագահության ստանձնումից ի վեր Սարգսյանն ընդգծել է հայ-ադրբեջանական հարաբերություններում առաջընթացի հասնելու համար քաղաքական կամքի անհրաժեշտությունը: Հայաստանի արտաքին քաղաքական գործիչները բազմիցս նշել են, որ Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը՝ երկու պետությունների միջև լայնամասշտաբ սպառազինությունների մրցավազքին զուգահեռ, տարածաշրջանային համագործակցության և հակամարտության կարգավորման նախաձեռնություններն ի սկզբանե դատապարտել են ձախողման: Այդ հիասթափությունը հատկապես վերաբերում է ԵՄ Արևելյան գործընկերությանը: Սարգսյանը կասկածի տակ էր առնում տարածաշրջանային համագործակցության բաղադրիչի կենսունակությունը՝ նշելով, որ Հայաստանից միակողմանի զիջումներ կորզելու Ադրբեջանի որոշումը դա դարձնում է անիմաստ: Ըստ նրա, Բաքվի ագրեսիվ եւ անզիջում քաղաքականության պատճառով Հայաստանի և Ադրբեջանի միջև չկան երկխոսության ընդհանուր եզրեր. «Արևելյան

[44] Serzh Sargsyan Recalls Armenia-Turkey Protocols, 2015, http://civilnet.am/2015/02/16/serzh-sargsyan-recallsarmenia-turkey-protocols/#.VOhbh_msWSo (08.07.2016).

գործընկերությունն ուներ որոշ խնդիրներ դեռևս իր ձևավորման շրջանում…Ես դեռևս չեմ հասկանում Հայաստանը և Ադրբեջանը մեկ գործընկերության մեջ միավորելու չափանիշը: Տարբեր հնարավորություններ, տարբեր մոտեցումներ, տարբեր նպատակներ, և սա է պատճառը, թե ինչու այդ բաղադրիչը չի աշխատում»[45]: Այդուհանդերձ, ի տարբերություն իր իրավանախորդի, Սարգսյանը լիովին մերժում է հայերի և ադրբեջանցիների միջև էթնիկ անահամատեղելիության ինքնության վրա հիմնված գաղափարները: Նա հստակ առանձնացնում է ադրբեջանական պետությունը ադրբեջանական հասարակությունից՝ հույս հայտնելով, որ Ադրբեջանի ժողովուրդը կամ ժողովրդի զգալի մասը չի պաշտպանում պետական մակարդակով վարվող հայատյաց քարոզչությունը. «Համոզված եմ, որ մեր ժողովուրդներն ունենալու են ավելի լավ ապագա, քան այն, որը կանխատեսում են որոշ առաջնորդներ, ովքեր քարոզում են ատելություն և պատերազմ… Ես Ադրբեջանի ժողովրդին չեմ համարում հայերի թշնամին: Մենք կարող ենք հարգալից կերպով լուծել մեր անհամաձայնությունները և խաղաղ համագոյակցել որպես հարևաններ»[46]: Հայաստանի արտաքին քաղաքական գործիչները՝ նախագահ Սարգսյանը և արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, խստորեն քննադատել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կրոնական բնույթի մասին շահարկումները և նշել, որ վեճը կրոնական համատեքստում ներկայացնելու ցանկացած փորձ կառուցողական չէ: Նալբանդյանը բազմիցս դատապարտել է Բաքվին՝ հայերի նկատմամբ էթնիկ ատելություն քարոզելու համար: Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ադրբեջանը հիմնականում բնութագրվում է

[45] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության հինգերորդ տարեդարձի առթիվ բարձր մակարդակի հանդիպմանը, ապրիլի 24, 2014, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/04/24/President-Serzh-Sargsyan-visit-Czech-Republic-April-24-speech/, (28.11.2016).

[46] Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, հոկտեմբերի 2, 2013, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/10/02/President-Serzh-Sargsyan-participated-at-the-session-of-the-PACE-speech/, (17.10.2016).

որպես հայատյաց և անզիջում[47]: Չնայած Հայաստանի և Ադրբեջանի ստանձնած հանձնառությանը՝ գտնել Լեռնային Ղարաբաղի հակամար-տության կարգավորման փոխզիջումային լուծում, բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ կան թյուրըմբռնումներ «փոխզիջում» եզրույթի վերաբերյալ: Այդ առումով հատկանշական էր 2015թ. սեպտեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանում նախագահ Սարգսյանի հայտարարությունը, ի լրումն 2015-ի հոկտեմբերի 10-ի Ֆրանկոֆոնիայի 31-րդ նախարարական կոնֆերանսի իր ելույթի. «Պետք է նշեմ, որ Ադրբեջանի վարած ագրեսիվ քաղաքականության արդյունքում այսօր ոչ միայն էական առաջընթաց չկա խնդրի կարգավորման բանակցային գործընթացում, այլև արձանագրվել է լարվածության աճի միտում: Այդ երկրի բռնակալ ռեժիմը խայտառակ ճնշումները գործիք է դարձրել ժողովրդական ցասումը խեղդելու համար… Մեզ համար արդեն ակնհայտ է՝ Ադրբեջանի ղեկավարությունը անդառնալիորեն կորցրել է ոչ միայն իրականության զգացողությունն, այլև մարդկային բոլոր նորմերը»[48]: Նախագահն արտահայտել է իր վրդովմունքը.

> «Ցավոք, այսօր առկա է հսկայական անդունդ ադրբեջանական իշխանությունների պատկերացում-ների և քաղաքակիրթ աշխարհում ընդունված նորմերի միջև: Եթե քաղաքակիրթ աշխար-հում որևէ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման համար ստեղծվում են անհրա-ժեշտ պայմաններ, ապա Ադրբեջանը, իր նավթային եկամուտներից կուրացած, ամեն կերպ սեփական պատկերացումները փորձում է

[47] **Terzyan A.,** The Role of Beliefs in Armenia - Azerbaijan Confrontation: A Glance Into Presidents' Discourse', *Armenian Journal of Political Science,* 2016, 1, 76-79.

[48] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 70-րդ նստաշրջանում, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2015/09/29/President-Serzh-Sargsyan-UN-General-Assembly-speech/.

պարտադրել ոչ միայն Լեռնային Ղարաբաղին ու Հայաստանին, այլև միջնորդ երկրներին…»[49]:

Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ադրբեջանը մեծապես ասոցացվում է «ոչ ժողովրդավարական», «անհանդուրժող», «ռազմատենչ», «ապակառուցողական» և «հայատյաց» հասկացությունների հետ: «Պարտադրանք, բռնություն, ահաբեկում, պատերազմ՝ սրանք են իրականության վերաբերյալ մեր հակառակորդի պատկերացումները: Այն իրողությունները, որ նրանք պարտադրում են սեփական ժողովրդին, նաև ցանկանում են պարտադրել մեզ: Մենք նրանց այդ պայմանները մերժել ենք և դրանք երբեք չենք ընդունելու: Մենք այլ իրականություն ենք կերտում՝ տնտեսական վերելք, օրենքի գերակայություն, ժողովրդավարության ամրապնդում: «Հայաստան» անունը առաջին հերթին պետք է զուգորդվի սրանց հետ»[50]: Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթը «ուրիշների» վերաբերյալ զգալի փոփոխություններ է կրել Սարգսյանի նախագահության շրջանում: Թուրքիայի հետ հաշտեցման կյանքի չկոչված ակնկալիքները պատճառ են դարձել, որպեսզի պաշտոնական Երևանի լավատեսական դիրքորոշումը փոխարինվի քննադատական դիրքորոշմամբ: Վերջինս ծագել է Ադրբեջանի հռետորաբանությունից և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականության, ինչպես նաև Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ձախողման արդյունքում:

[49] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Քարնեգի հիմնադրամում ԱՄՆ փորձագիտական հանրության ներկայացուցիչների առջև, հոկտեմբերի 1, 2015, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2015/10/01/President-Serzh-Sargsyan-speech-at-Carnegie/ (28.03.2017).

[50] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ, ապրիլի 9, 2013, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/04/09/Statement-by-Serzh-Sargsyan-at-the-Ceremony-of-Inauguration/.

**Եզրակացություն**

1991-2016 թվականներին Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ադրբեջանի և Թուրքիայի մասին պատկերացումները զգալի փոփոխությունների են ենթարկվել: Հայաստանի նախագահների համոզմունքները և իրավիճակային խոչընդոտները ձևավորել են հստակ պատկերացումներ թշնամիների մասին: Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն Ադրբեջանը և Թուրքիան համարում էր Հայաստանի հարմար հնարավոր դաշնակիցներ՝ ընդգծելով ռազմավարական դաշինքի ճանապարհին կանգնած բոլոր խոչընդոտների լուծման անհրաժեշտությունը: Նախագահի խոսույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի և Թուրքիայի հետ համագործակցության անհապաղ հաստատումը և զարգացումը երկրորդ պլան են մղել Ցեղասպանության ճանաչման և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցերը: Ուստի, ինքնության հետ կապված համոզմունքները, հատկապես՝ Հայաստանի հաստատուն թշնամիների վերաբերյալ, ստորադասվում էին նրա կենտրոնական համոզմունք-ներին հսկայական տնտեսական օգուտների վերաբերյալ, ինչը հնարավոր կդառնար հարևան երկրների հետ վեճերի արագ կարգավորման արդյունքում: Հատկանշական է, որ «հարմար դաշնակիցներ» և «անփոխարինելի տնտեսական գործընկերներ» արտահայտությունները հաճախ են կիրառվում Տեր-Պետրոսյանի խոսույթում՝ Հայաստանի համար Ադրբեջանի և Թուրքիայի կարևորությունը բնորոշելու համար:

Հայստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը էականորեն փոխեց Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթը Ադրբեջանի և Թուրքիայի վերաբերյալ: Ըստ նրա, խնդրահարույց հարաբերությունների պատճառը Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի և Թուրքիայի որդեգրած ռազմատենչ քաղաքականությունն է: Նախագահը վեճերի կարգավորումը կապում էր ոչ թե տնտեսական օգուտների դիմաց Հայաստանի կողմից միակողմանի զիջումների, այլ Ադրբեջանի և Թուրքիայի հակահայկական հետապնդումների հետ: Կարելի է պնդել, որ, ի տարբերություն իր իրավանախորդների, ինքնության հետ կապված համոզմունքները չեն ստորադասվել հարևանների հետ գործընկերության հաստատման տնտեսական

օգուտների վերաբերյալ համոզմունքներին, նույնիսկ՝ միակողմանի զիջումների գնով: Նա Թուրքիան ընկալում էր որպես ապակառուցողական և ագրեսիվ դերակատար, որը ձգտում է խեղդել Հայաստանը շրջափակման միջոցով: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, Քոչարյանը կասկածի տակ էր առնում հայերի և ադրբեջանցիների էթնիկ համատեղելիության հարցը: Ուստի, Ադրբեջանի և Թուրքիայի վերաբերյալ Քոչարյանի համոզմունքները բավական փակ էին՝ հաշվի առնելով, որ այդ երկրները (մասնավորապես՝ Ադրբեջանը) որակում է որպես «թշնամական», «ռազմատենչ» և նույնիսկ «անհամատեղելի Հայաստանի հետ»:

Հատկանշական է, որ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանն իր պաշտոնավարումը սկսեց լավատեսական նոտայով՝ փորձելով դուրս գալ հարևան երկրների հետ խնդրահարույց հարաբերությունների փակուղուց: Այդուհանդերձ, իրավիճակային խոչընդոտները և, մասնավորապես, թշնամիների աճող ռազմատենչությունը Հայաստանի նկատմամբ նախագահի նախնական լավատեսությունը փոխակերպեցին խոր հիասթափության: Թուրքիայի կտրուկ մերժումը՝ բացել հայ-թուրքական սահմանը, ինչպես նաև Ադրբեջանի աճող թշնամանքը Հայաստանի նկատմամբ, ինչի վառ ապացույցը եղավ սպառազինությունների մրցավազքը, ստիպեցին նրան վերանայել սեփական համոզմունքները: Զարմանալի չէ, որ նրա խոսույթում Ադրբեջանը մեծապես բնորոշվում է «ոչ ժողովրդավարական», «անզիջում», «ռազմատենչ», «ապակառուցողական» և «հայատյաց» հասկացություններով: Նախագահը հաճախ օգտագործում է նաև «օսմանյան», «ապակառուցողական», «ռազմատենչ» և «անվստահելի» հասկացությունները՝ Թուրքիան և մասնավորապես Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը բնորոշելու համար:

# From Natural Allies to Belligerent Neighbours: The Evolution of Foes' Conceptions in Armenia's Foreign Policy Discourse

ARAM TERZYAN
*Malmö University, Sweden*

Conventional wisdom presumes that the portrayal of the foe in a state's foreign policy discourse is quite indicative of the core characteristics of its foreign policy identity. Relying on discourse analysis of Armenian Presidents' speeches, this study explores the evolution of foe's conception in Armenia's foreign policy discourse from 1991 to 2016. More specifically, it scrutinizes major ups and downs of Azerbaijan's and Turkey's conceptions, examining their identity-related and situational determinants and constraints. It markedly departs from political and economic explanations of Armenia's troubled relations with Azerbaijan and Turkey, focusing chiefly on Armenian Presidents' beliefs about country's staunch foes. Remarkably, foes' conceptions have experienced puzzling fluctuations in Presidents' discourse from 1991-2016. The characteristics of Azerbaijan and Turkey have shifted from the notions 'natural allies' and 'indispensable neighbours' to 'belligerent', 'bellicose', 'destructive, 'Armeneophobic', 'Ottoman' and 'unreliable' actors. Along with situational constraints, the principal causes of the shift lie in different belief systems of Armenian Presidents, and most, importantly, Azerbaijan's and Turkey's mounting animosity towards Armenia.